ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնք, ՀՀ,
Արմավիրի մարզ, գ. Այգեկ, Հեռ. (0231)65760 , aygek.armavir@mta.gov.am

N 54
28 փետրվար 2019թ.

**ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ
ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ**

Կից Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Այգեկ համայնքի ղեկավարի կողմից 2019 թվականի փետրվարի 20-ի N05-Ա ընդունված որոշումը և 2019 թվականի փետրվարի 19-ի N05-Ա արձակված կարգադրությունը:
Առդիր՝ 3 թերթ:

Համայնքի ղեկավար՝ Վարուժան Աբրահամյան

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Գ. Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Այգեկ, (0231)65760, aygek.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 05-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 80-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 58-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկի համայնքապետարանում 2019 թվականի փետրվարի 20-ին կայացած մրցութային կարգով հողամասի վարձակալությամբ տրամադրման մրցույթի արդյունքները՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկի համայնքապետարանում 2019 թվականի փետրվարի 20-ին կայացած 0,8392 հեկտար արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության (գյուղատնտեսական արտադրական օբյեկտների) հողամասի (կադաստրային ծածկագիր՝ 04-009-0102-0015) վարձակալությամբ տրամադրման մրցութային հանձնաժողովի կողմից 2019 թվականի փետրվարի 20-ին կազմված N1 արձանագրությունը՝ մրցույթի արդյունքների վերաբերյալ:
2. Մրցույթում հաղթող ճանաչված Հայկ Հրաչիկի Եղիազարյանի հետ, օրենքով սահմանված կարգով, կնքել հողամասի վարձակալությամբ տրամադրման պայմանագիր:
3. Հողամասը տրամադրվում է առանց կառուցապատման իրավունքի:
4. Սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով որոշման մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի միավորված մարզերի ստորաբաժանմանը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ **ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

20 19 թ. փետրվարի 20
գ.Այգեկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Այգեկ, (0231)65760, aygek.armavir@mta.gov.am

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

19 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 05-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ՇԱԲԱԹՕՐՅԱԿ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 16-րդ կետով, հիմք ընդունելով Արմավիրի մարզպետարանի 2019 թվականի փետրվարի 13-ի N01/10.1/00631-2019 գրությունը՝ ***կարգադրում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքում <<Մաքուր Հայաստան>> ծրագրի շրջանակներում 2019 թվականի մարտի 23-ին կազմակերպել և անցկացնել համապետական շաբաթօրյակ:
2. Շաբաթօրյակին մասնակից դարձնել համայնքի տարածքում գործող բոլոր կազմակերպություններին, կրթական հաստատություններին, անհատ ձեռնարկատերերին, բնակիչներին:
3. Կազմել շաբաթօրյակի սխեմա՝ սահմանազատել մաքրման ենթակա տարածքները:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար՝ **ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

2019 թ. փետրվարի 19
գ.Այգեկ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Այգեկ
համայնքի ղեկավարի
2019 թվականի փետրվարի «19»-ի N05-Ա կարգադրության

ՍԽԵՄԱ
ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ՇԱԲԱԹՕՐՅԱԿԻ

2019 թվականի մարտի 23-ին «Մաքուր Հայաստան» ծրագրի շրջանակներում կազմակերպելիք շաբաթօրյակին մասնակցելու են Այգեկ համայնքի թվով մոտ 89 բնակիչներ: Մաքրվելու են համայնքի 22 փողոցները, համայնքապետարանի, դպրոցի, մանկապարտեզի, մշակույթի տան, բուժկետ-գրադարանի շենքի, համայնքում գործող խանութների տարածքները: Յուրքանչյուր տարածքի համար պատասխանատու է տվյալ կազմակերպության ղեկավարը:

Շաբաթօրյակի ընթացքում օգտագործվելու է էքսկավատոր, անվավոր տրակտոր՝ կցասայլակով, օգտագործվելու են բահեր, փոցխեր, ձեռնոցներ, մեկանգամյա օգտագործման պարկեր:

Շաբաթօրյակի աշխատանքների կազմակերպման պատասխանատուն համայնքի ղեկավարի տեղակալն է:

ԱՅԳԵԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ _____ Գ. ՍԱՐԳՍՅԱՆ